ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«20» 03 2026 թ.
№ ԿԱԼՆ/2/604

«ԲԻԴԵՔ» ՍՊ ընկերությանը
ՀՎՀՀ 00450801
ՀՀ, ք. Երևան, Նեկրասովի 86
հեռ. +37498 12 55 22, +37411 57 55 22
էլ. հասցեն՝ bedeck.llc@mail.ru, info@bedeck.am

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԲԻԴԵՔ» ՍՊ ընկերության միջև 07.04.2025թ. կնքված N ՓՊՄԱՇՁԲ-25-10/1-1 գնման պայմանագրի (Այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «ԲԻԴԵՔ» ՍՊ ընկերությունը պարտավոր էր մինչև 2025թ.-ի դեկտեմբերի 10-ը կատարել 120,0000,000 (մեկ հարյուր քսան միլիոն) ՀՀ դրամի չափով վերականգման աշխատանքներ (Հողանցման կոնտուրներ), սակայն «ԲԻԴԵՔ» ՍՊ ընկերության կողմից առավելագույն գնից 79,569,238 (յոթանասունինը միլիոն հինգ հարյուր վաթսունինը հազար երկու հարյուր երեսունութ) ՀՀ դրամի չափով աշխատանքները չեն կատարվել:

Հիմք ընդունելով Պայմանագր 2.1.3. կետի «բ» ենթակետը՝ (խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը՝ ընդ որում ուշացած օրերի քանակը կազմում է 33 օր), ՀՀ պաշտպանության նախարարությունը 2026թ. մարտի 20-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը 79,569,238 ՀՀ դրամի չափով:

Տեղեկացնում եմ, որ «ԲԻԴԵՔ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 1,312,892 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 5.3 կետի համաձայն), որը հաշվարկված է լուծման որոշում կայացնելու օրվա դրությամբ (04.02.2026թ.) և 600,000 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 5.2 կետի համաձայն):

Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում ենթակա է գանձման նաև պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 12,000,000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը՝ 23,870,771 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Ելնելով վերոգրյալից տեղեկացնում եմ, եթե մինչև 2026թ. մարտի 30-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 12,000,000 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 23,870,771 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա Ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2026թ. մարտի 30-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2073 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարները Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ